



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2018 թ.

ՇԵՆՏԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ձեր 02.02.2018թ. թիվ 61 գրությանը.

Հարգելի պարոն Սաքունց

Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2017թ. միջոցառումների իրականացման ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 38 արձանագրային որոշման 2-րդ հավելվածի դրույթների Լոռու մարզում կատարվել են.

Մարզի հանրակրթական հաստատություններում ընթացիկ տարում «Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից պարբերաբար կատարվում են կանխարգելիչ միջոցառումներ, ուսումնական հաստատություններում կազմակերպվել են հանդիպումներ, բաց դասեր և առողջ ապրելակերպի դասաժամեր, համադպրոցական կինոդիտում սեմինար, զրույցներ, ֆիզիկական պատրաստականության՝ առողջապահական, մարզական միջոցառումների կազմակերպում և անցկացում, թեման լուսաբանվում է զանգվածային լրատվամիջոցներով, և ընթացքում իրականացվում է հայտնաբերված դեպքերի բուժում: Մարզի առողջապահական ընկերությունների բժիշկները մասնակցում են թմրամոլության դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում անցկացվող համաժողովներին և քննարկումներին:

Առողջապահական ընկերությունները համագործակցում են նաև ոստիկանության և թմրամոլության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, իրավապաշտպան կազմակերպությունների հետ: Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսերում 2012թ. հուլիս ամսից իրականացվում է մեթադոնային փոխարինող բուժման ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության և Գլոբալ ֆոնդի Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի շրջանակներում: 2017թ. այս ծրագրում ընդգրկված են 17 թմրամոլներ: Ծրագիրն ունի բարձր արդյունավետություն:

2017թ. ընթացքում Լոռու մարզի համայնքներում կառուցվել են թվով վեց մարզական բակեր:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏ

ՈՆԱԼԲԱՆԴՅԱՆ